

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հրապարակված է՝ 19.12.2013

Վերջին ժամկետը՝ 09.10.2014

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածից հանել «ամրագրվում են Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները,» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 3-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմնական հասկացությունների իմաստով:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց վրա:»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 5-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային ծառայության վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հանրային ծառայության հիմնական սկզբունքները:»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը «սույն օրենքով,» բառերից հետո լրացնել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,» բառերով:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը «ունեցող» բառից հետո լրացնել «համայնքի» բառով:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 8-րդ հոդվածում.

1. «առավելագույն» բառը փոխարինել «ավելի բարձր» բառերով.

2. 2-րդ մասը «համայնքի ղեկավարը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 2.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով, իսկ «աշխատակազմի քարտուղարը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով.

3. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.2-րդ մասով.

«2.2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 1.2.-րդ մասով նախատեսված դեպքում համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի, ինչպես նաև 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճանները շնորհում, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում զրկում է համապատասխան համայնքի ղեկավարը:»:

4. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Համայնքային ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ համայնքային ծառայողին շնորհվում է համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի համայնքային ծառայության համապատասխան կամ ավելի բարձր դասային աստիճան:»:

5. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1. և 3.2. մասերով.

«3.1. Համայնքային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող համայնքային ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան կարող է շնորհվել ոչ շուտ, քան համայնքային ծառայության տվյալ խմբի տվյալ ենթախմբի պաշտոնը, սույն օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանով, երեք տարի անընդմեջ զբաղեցնելուց հետո: Սույն օրենքի իմաստով համայնքային ծառայության պաշտոնն անընդմեջ զբաղեցնել է համարվում տվյալ պաշտոնը զբաղեցնելու որչ ժամանակահատվածը կամ եթե համայնքային ծառայության մի պաշտոնից ազատվելու և մյուսին սահմանված կարգով նշանակվելու ժամանակահատվածը չի գերազանցել մեկ ամիսը:

3.2. Առաջին անգամ (բացառությամբ սույն օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված դեպքերի) համայնքային

ծառայության պաշտոն զբաղեցնող անձին համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:» 6. ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.

7. 5-րդ մասի 1-ին նախադասությունում «քաղաքացիական ծառայության» բառերը փոխարինել «հանրային ծառայության մյուս տեսակների» բառերով.

8. 5-րդ մասի 2-րդ նախադասությունը «պետական խորհրդակցական դասային աստիճան» բառերից հետո լրացնել «կամ դրանց համապատասխանող հանրային ծառայության մյուս տեսակների դասային աստիճան» բառերով: 307-ՎԱԾ 9. Օրենքի 10-րդ հոդվածում.

1. 1-ին մասի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ հանրային ծառայության մյուս տեսակների պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ հանրային ծառայության մյուս տեսակների դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ հանրային ծառայության մյուս տեսակների պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.»:

2. 2-րդ մասի 2-րդ պարբերությունը և 3-րդ մասը «ունեցող» բառերից հետո լրացնել «համայնքի» բառերով: 307-ՎԱԾ 10. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում.

1. «բ» կետում «համայնքային և (կամ) քաղաքացիական» բառերը փոխարինել «հանրային» բառով.

2. «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն»:

307-ՎԱԾ 11. Օրենքի 14-րդ հոդվածում.

1. 8-րդ մասի 3-րդ պարբերությունում «հանձնաժողովը» բառը փոխարինել «հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ» բառերով.

2. 9.1-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված գրավոր բողոքը բնության է առնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ որոշելով կոնկրետ մասնակցի՝ մրցույթում հաղթող ճանաչելու, իսկ հարցազրույցի փուլը սահմանված կարգի խախտմամբ անցկացված լինելու դեպքում՝ նոր հարցազրույցի փուլ անցկացնելու հարցը: Մրցույթի արդյունքների բողոքարկման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի որոշումները կրում են պարտադիր բնույթ»:

307-ՎԱԾ 12. Օրենքի 14.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով.

«4. Համայնքային ծառայության թափուր պաշտոն (բացառությամբ աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև նոր ստեղծված համայնքային ծառայության պաշտոնների) առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակել համապատասխան աշխատակազմի կամ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման այն համայնքային ծառայողին, որը միաժամանակ՝

ա) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

բ) համարվում է համայնքային ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու է համայնքային ծառայության իր զբաղեցրած պաշտոնի խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի պաշտոն.

գ) ստորաբաժանման մեջ ներառված համայնքային ծառայության թափուր պաշտոնի դեպքում համարվում է կոնկրետ ստորաբաժանման համայնքային ծառայող, իսկ ստորաբաժանման մեջ չներառված աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնի դեպքում՝ աշխատակազմի համայնքային ծառայող.

դ) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:»:

307-ՎԱԾ 13. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 1.1-րդ և 1.2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համայնքային ծառայության գլխավոր խմբի և առաջատար խմբի առաջին ենթախմբի պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը (բացառությամբ սույն հոդվածի 1.1. մասի), իսկ առաջատար խմբի երկրորդ և երրորդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր խմբի պաշտոններում՝ աշխատակազմի

քարտուղարը (բացառությամբ սույն հոդվածի 1.2. մասի)՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից:

1.1 Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է Երևանի վարչական շրջանի ղեկավարը՝ մրցույթում հաղթող ճանաչված անձանցից:

1.2. Աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր, այդ թվում՝ ժամանակավոր թափուր, լինելու և պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի բացակայության կամ աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցված չլինելու դեպքում համայնքային ծառայության առաջատար խմբի երկրորդ և երրորդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր խմբի պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է տվյալ համայնքի ղեկավարը:»:

ՀՈՂՎԱԾ 14. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում.

1. «տեքստը» բառից հետո լրացնել «, որը կցվում է նրա անձնական գործին» բառերով.

2. հանել 2-րդ նախադասությունը:

ՀՈՂՎԱԾ 15. Օրենքի 17-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է համայնքային ծառայողի մասնագիտական աշխատանքային ստաժում, եթե այն համապատասխանում է ստացած բարձրագույն կրթությանը, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթերում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժին:»:

2. 3-րդ մասում «Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով նախատեսված հիմքով՝ համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձի քաղաքական» բառերը փոխարինել «Քաղաքական» բառերով:

ՀՈՂՎԱԾ 16. Օրենքի 19-րդ հոդվածում.

1. 2-րդ մասում «ատեստավորումն անցկացվում է» բառերը փոխարինել «ատեստավորումը կարող է անցկացվել» բառերով.

2. 5-րդ մասի 1-ին պարբերության «ա» կետում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով.

3. 5-րդ մասի 1-ին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» կետով.

«դ) սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողները:»:

4. 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասի «ա» կետը չի տարածվում սույն օրենքի 14.1-րդ հոդվածի 4-րդ մասով և 29-րդ հոդվածով սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերի վրա:»:

5. 9-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Փաստաթղթային ատեստավորման ենթակա են այն համայնքային ծառայողները, ովքեր ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանից բարձր դասային աստիճան կամ համայնքային ծառայության նույն պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են:»:

ՀՈՂՎԱԾ 17. Օրենքի 21-րդ հոդվածում.

1. 1-ին մասի «ա» կետը «(տեղակալների)» բառից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի» բառերով.

2. 1-ին մասի «գ» կետն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 18. Օրենքի 22-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային ծառայողն ունի «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային ծառայողի համար սահմանված հիմնական իրավունքները:»:

ՀՈՂՎԱԾ 19. Օրենքի 23-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային ծառայողը կրում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային ծառայողի համար սահմանված հիմնական պարտականությունները:»:

ՀՈՂՎԱԾ 20. Օրենքի 24-րդ հոդվածում.

1. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «թ» կետով.

«թ) լինել նույն համայնքի ավագանու անդամ:»:

2. 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, համայնքային ծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ և այլն) ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման:»:

ՀՈՂՎԱԾ 21. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «և» բառը փոխարինել «կամ» բառով:

ՀՈՂՎԱԾ 22. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ը» կետով.

«ը) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովելը:»:

ՀՈՂՎԱԾ 23. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 24. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը «կարող են համալրվել» բառերից հետո լրացնել

«վերակազմակերպված կամ» բառերով:

ՀՈՂՎԱԾ 25. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում «գերազանց» բառը փոխարինել «կամ հատուկ առաջադրանքները որակյալ» բառերով:

ՀՈՂՎԱԾ 26. Օրենքի 32-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «պաշտոնեական» բառը փոխարինել «ծառայողական» բառով, իսկ «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով:

2. 1-ին մասի «գ 1» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ 1) համայնքային ծառայողին նույն պաշտոնում աշխատելու ժամանակահատվածում շնորհված ավելի բարձր դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով.»:

3. 3-րդ մասում «առավելագույն» բառը փոխարինել «ավելի բարձր» բառերով:

4. 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված համայնքային ծառայողից:»:

ՀՈՂՎԱԾ 27. Օրենքի 33-րդ հոդվածում

1. 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ» սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կամ «գ 1» կետերով նախատեսված կարգապահական տույժի կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական խախտում թույլ տալու հիմքով նշված տույժերից որևէ մեկի կիրառումը.».

2. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «իա» կետով.

«իա) սույն օրենքի 14.1-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 29-րդ հոդվածով սահմանված կարգով համայնքային ծառայության թափուր պաշտոնում նշանակվելը.»:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5. Սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «ժը» կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատելու դեպքում համայնքային ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:»:

ՀՈՂՎԱԾ 28. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը պայմանավորված է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու, ինչպես նաև համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ տասն ամսվա ընթացքում հանրային ծառայության և դրա հետ կապված հարաբերություններ կարգավորող նորմեր պարունակող իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մի շարք դրույթներ, մասնավորապես՝ օրենքում օգտագործվող հասկացությունները, համայնքային ծառայության սկզբունքները, համայնքային ծառայողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն, որոնցում առկա են որոշակի անհամապատասխանություններ: Այդպիսի անհամապատասխանություններից են օրինակ՝

- «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նկարագրված են համայնքային ծառայության դասային աստիճանների համապատասխանությունը քաղաքացիական ծառայության դասային աստիճանների հետ, մինչդեռ դրա լիազորությունը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով վերապահված է ՀՀ կառավարությանը, որն արդեն իսկ ընդունել է 15.12.2012թ-ի Ն N 1797-Ն որոշումը.

- համայնքային ծառայողին թույլատրվող այլ վճարովի աշխատանքների ցանկից բացակայում է ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքը, որը նախատեսված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի վերը նշվածից համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների

- դիտարկման արդյունքներով բացահայտվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝
- ՀՀ մի շարք համայնքներում աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր լինելու պատճառով խնդիրներ են առաջանում քարտուղարին վերապահված պաշտոններում նշանակելու, ազատելու, ինչպես նաև համապատասխան դասային աստիճաններ շնորհելու, գրկելու և այլ հարցերում.
 - համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայողական առաջխաղացման հնարավորությունների ընձեռնման հարցում.
 - համայնքային ծառայողի երդման մասին նրա անձնական գործում գրառում կատարելու հարցում.
 - համայնքային ծառայության ստաժը մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվարկելու հարցում.
 - արտամրցութային կարգով այլ պաշտոնում նշանակված անձանց հերթական ատեստավորման ժամկետների հարցում.
 - կարգապահական տույժերի հաջորդական կիրառմամբ համայնքային ծառայողին պաշտոնից ազատման հետ կապված հարցերում
- և այլն:

ՏՎՅԱԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նախատեսում:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Ներկայացված օրենքի նախագծի նպատակը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցումն է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին լուծում տալն է:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության կողմից:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է.

- «Հանրային ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների միջև առկա անհամապատասխանությունների վերացումը.
- աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր լինելու դեպքում քարտուղարին վերապահված պաշտոններում նշանակելու, ազատելու, ինչպես նաև համապատասխան դասային աստիճաններ շնորհելու և գրկելու լիազորությունը համայնքի ղեկավարին վերապահումը.
- համայնքային ծառայության համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի շնորհման դեպքերի և ժամկետների սահմանումը.
- թափուր պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող մրցույթների հարցազրույցի փուլում մասնակիցների գնահատման գործընթացի հստակեցումը.
- մրցույթի արդյունքների բողոքարկման դեպքում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին հարցազրույցի նոր փուլ անցկացնելու մասին որոշման ընդունման լիազորություն վերապահելը, որը վերաբերում է այն դեպքերին, երբ հարցազրույցի փուլում չեն բացահայտվում մասնակցի գործնական կարողությունները.
- համայնքային ծառայության թափուր պաշտոններում արտամրցութային կարգով նշանակելու գործընթացի կանոնակարգումը.
- համայնքային ծառայության ստաժը մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվարկելու հարցի հստակեցումը.
- փաստաթղթային ատեստավորման ենթակա անձանց շրջանակի ընդլայնումը.
- կարգապահական տույժ նշանակելուց առաջ համայնքային ծառայողից բացատրություն պահանջող պաշտոնատար անձին սահմանելը.
- համայնքային ծառայողին պաշտոնից ազատման հիմքերում կարգապահական կոնկրետ տույժերի հաջորդական կիրառման դեպքերի նկարագրումը.

- հաստիքների կրճատման հիմքով ծառայողին պաշտոնից ազատելու դեպքում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նրան նախազգուշացնելը պարտադիր չլինելու նորմի կիրառումը համայնքային ծառայությունում.

- բացահայտված մյուս խնդիրների լուծումը: